

ՍՐՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ՝

ԳԻՆ ԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ

Շատ դիւրին է սատանային հետ կռուիլ, ինչպէս լոյսը խաւարին հետ կը պայֆարի եւ բարին՝ չարին հետ: Սատանան խաւար է ու չարութիւն. եթէ մենք լոյս ըլլանք եւ բարի, կը հալածենք զայն, ինչպէս լոյսը կը հալածէ խաւարը, եւ բարին՝ չարը: Իսկ եթէ մենք ալ խաւար ըլլանք, աշխինքն չար, ան կ'որսայ մեզ եւ խառնուելով կը միանանք իրեն: Որպէսզի չպատահի ասիկա, միշտ գոհութիւն յայտնենք Աստուծոյ, ինչպէս «Երկինքը կը պատմէ Աստուծոյ փառքը»: Երկինքը ո՛չ թէ ձայնով կը փառաւորէ զԱստուած, այլ՝ իր կերպարանով ուրիշները օրհնութեան կը մղէ: Նմանապէս, անոնք որոնք բարիք կը գործեն, անոնց պատճառաւ ուրիշները զԱստուած կը փառաւորեն:

Երբ շատերը կը խրատեն, ո՛չ թէ երկինքը օրհնակ կը բերեն, այլ՝ մարդիկ, որոնք գագաններէն աւելի չար էին եւ յետոյ հրեշտակներու հաւասար եղան եւ այս ձեւով բազմաթիւ չարքեր բարի կ'ընեն: Եթէ երկինքը այսքան ժամանակ տեսնելով այդ բոլորը, չի կրնար չար մէկը բարի ընել, մինչ մարդը կը յաջողի իր նմանը բարի դարձնել, կը նշանակէ թէ մարդս շատ աւելի գեղեցիկ է քան՝ երկինքը ու բոլոր զարդերը: Հետեւաբար, եթէ անոնցմէ աւելի վար գտնուիք, ի՞նչպէս կրնանք արքայութեան արժանի ըլլալ, երբ ամէնքս ալ մեր գործերով ու խօսքերով միշտ կ'անարգենք զԱստուած, գոր անոնք կը փառաւորեն:

Ան որ բերանը, ականջը կամ մարմինն անդամներէն որեւէ մէկը անարգէ, այդ անարգանքը կ'երթայ Քրիստոսի:

**ԲԱՐՄԵՂ ՄԱՇԿԵԻՈՐՑԻ**

Ի՞նչ է Սարկաւագին պաշտօնը:



Սարկաւագը սպասաւորն է Սուրբ պատարագի Սեղանին: Ան միջնորդն է ժողովուրդին եւ պատարագիչ քահանային միջեւ: Իր պարտականութիւններն են՝ խընկարկել, Աւետարան կարդալ, վերաբերում կատարել, ժողովուրդը առաջնորդել Աստուծոյ երկրպագելու եւ ուշադրութեամբ հետեւելու արարողութեան, քահանայէն օրհնութիւն հայցելու ժողովուրդին համար, Ս. Սեղանէն ստանալ Քրիստոսի յայտնութեան աւետիսը եւ զայն ողջոյնով փոխանցել ժողովուրդին: Իսկ արարողութեան լրումին Փրկչին մարմինն ու սփիւնը ճաշակելու:

Առաջին Սարկաւագը եղաւ Ս. Ստեփանոս նախավկան:



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 22 ՅՈՒՆԻՈՒՆ 2023

ԹԻՒ 4

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 58.13-59.7: Բ. Տմ. 4.12-5.10: Յհ. 3.13-21

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 3.13-21

Ոչ որ երկինք ելաւ բացի Մարդու որդիէն, որ երկինքէն իջաւ եւ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ՝ յաիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց ոչ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ՝ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր, չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

Եւ դատապարտութիւնը այս է: Լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով, որ չար գործ կը կատարէ՝ կ'ստէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով, որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ, թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

\*\*\*\*\*

Առաջ Քրիստոսի ԶԿԱՂ ՔՐԻՍՏՈՍՆԵԱԿԱՆ ԿԵՆՔ

Ո՛չ միայն դժուար է քրիստոնէական կեանք ապրիլը, այլեւ՝ անկարելի: Անկարելի կ'ըլլայ, եթէ երբեք Քրիստոսի չենք միացած ինչպէս ճիշդ մը ծառին կը միանայ: Առանց Քրիստոսի մենք ոչինչ կրնանք ընել (Յհ. 15.5): Իսկ երբ Յիսուսի միացած ըլլանք, ամէն ինչ կրնանք տանիլ շնորհիւ իրեն, որովհետեւ ինքն է որ մեզ կը զօրացնէ իր կամքը կատարելու համար (Փղպ. 4.13): Առանց Քրիստոսի օգնութեան, մենք չենք կրնար քրիստոնէական կեանք ապրիլ: Առանց Քրիստոսի Հոգիին, մենք անկարող ենք ապրելու աստուածապաշտութեան կեանք, հոգեւոր կեանք: Ահա թէ ինչու Քրիստոս խոստացաւ Հօրը երթալէ ետք Սուրբ Հոգին դրկել մեզի (Յհ. 14.16):

ԱԹԱՆԱՍ ՉԱՅՐԱՊԵՏ

Հռչականուն ախոյեան հաւատոյ Ս. Երրորդութեան՝ ընդդէմ Արիոսի, որ ուրացած էր Քրիստոսի աստուածութիւնը: Քրիստոնեայ բարեպաշտ ընտանիքի գաւակ, ծնաւ 295-ին Աղէքսանդրիոյ մէջ: Նոյն քաղաքին Աղէքսանդրոս հայրապետը, օր մը տեսնելով, որ անկկա դեռ մատաղ մանուկ, ծովեզերքը եպիսկոպոսի կերպ առած, մկրտութիւն եւ ձեռնադրութիւն կատարել կը ձեռացնէ, հոգեւոր կոչումի նշան նկատեց իր այդ ընթացքը եւ զայն ընդունեց հայրապետանոցի մէջ, ուր զարգացաւ շնորհալի փոքրիկը: Յետոյ սարկաւագ ձեռնադրուեցաւ անկէ եւ կարճ ժամանակի մէջ փայլեցաւ իր տաղանդով, աստուածաբանական խոր հմտութեամբ ու գրիչի եւ խօսքի ձիրքերովը առարկայ դառնալով ամենուն ուշադրութեան: Մարկաւագ էր տակաւին, երբ ընկերակցելով իր Եպիսկոպոսին, Նիկիոյ Ժողովին մէջ պաշտպանեց ուղղափառ հաւատքը: Աղէքսանդրի յաջորդելէ ետք, իբրեւ պատրիարք Աղէքսանդրիոյ, իշխանութեամբ եւ աւելի ոգեւորուած ջանքով պայքարեցաւ աղանդամիտ հոսանքներու, մասնաւորապէս Արիանոսներու եւ Կիսարիանոսներու դէմ. եւ այդ պատճառաւ քանիցս ենթարկուեցաւ բռուն հակառակութեան, երբեմն ստիպուելով նոյնիսկ հեռանալ իր Աթոռէն: Մեռաւ 373-ին: Իր հզօր վարդապետութիւնը եւ անհամեմատ կորովը արժանի դարձուցին զինքը նկատուելու եկեղեցոյ ամենամեծ վարդապետներէն մին: Իրաւամբ է, որ Ս. Գրիգոր Նազիանզացի կոչած է զայն «Մին Եկեղեցոյ»:

Իր գրական երկերը, ամենքն ալ աստուածաբանական եւ ջատագովական, որոնցմէ կարեւոր մաս մը Ե. դարուն եւ յետոյ թարգմանուած են հայերէնի, եկեղեցական մատենագրութեան ամենէն թանկագին հարստութիւններէն կը համարուին իրաւամբ:

ԿԻՐԵՂ ՉԱՅՐԱՊԵՏ

Եգիպտացի ազնուական եւ բարեպաշտ ընտանիքէ, ազգական Թէոփիլոս պատրիարքին, որմէ ձեռնադրուեցաւ եւ 412-ին անոր յաջորդեց իբրեւ պատրիարք Աղէքսանդրիոյ: Վարդապետ եկեղեցոյ եւ կորովի պաշտպան ուղղափառ հաւատքին: Ինքն էր, որ նախագահեց Եփեսոսի տիեզերական ժողովին, ջախջախեց Նեստորի հերետիկոսութիւնը եւ «միաւորեալ մի բնութիւն» բանաձեւովը, որ հիմն է Հայաստանեայց եկեղեցոյ դաւանութեան, իր վերջին ճշդումին յանգեցուց քրիստոսաբանութիւնը: Այնքան եռանդուն հոգիով ջանաց ջնջել հեթանոսութեան հետքերը Աղէքսանդրիոյ մէջ, որ յանրաւի գրպարտուեցաւ իբրեւ պատճառ սպաննութեան Հիւպատիա իմաստասէր տիկնոջ: Հեղինակ է մեկնաբանական եւ աստուածաբանական բազմաթիւ գիրքերու, որոնցմէ շատերը հայերէնի թարգմանուած են մասամբ Ե. եւ մասամբ Ը. դարերուն Միւնեսց Դպրոցի պատկանող մատենագիրներու միջոցաւ: Կիրեղ հայրապետ մեռաւ 444 թուականին:

Հայ Եկեղեցոյ տօնացոյցին համաձայն այս տարի Աթանաս եւ Կիրեղ հայրապետներու տօնը կը զուգադիպի Շաբաթ՝ 21 Յունուարին:

**Քարի անուանակոչութեան տօն Աթանաս եւ Կիրեղ անուն կրող մեր հայ ազգի գաւակներուն:**

Դրամի սիրոյն մի՛ ծածկեր ճշմարտութիւնը

Յիսուսի յարութենէն ետք անոր գերեզմանին պահապաններէն ոմանք Երուսաղէմ գացին «եւ ինչ որ պատահած էր պատմեցին աւագ քահանաներուն»: Աւագ քահանաներն ու երեցները խորհրդակցելէ ետք, դրամ տուին պահապաններուն եւ պատուիրեցին անոնց ըսել, թէ «աշակերտները գիշերով եկան եւ գողցան մարմինը» երբ իրենք քնացած էին (Մտ. 28.11-13): Սիրելիներ, մենք ալ երբեմն կաշառք չե՞նք ստանար որպէսզի սրտենք: Կաշառքը միայն դրամը չէ: Մէկը կրնայ կաշառուիլ խոստումով մը, աթոռով, փառքով, եւայլն: Որքա՞ն մարդիկ կան, որոնք շահելու համար բան մը կամ սիրաշահելու համար անձ մը, կը ստեն ու ճշմարտութիւնը կը խեղաթիւրեն: Մենք չըլլանք անոնցմէ:

ԱՍՏՈՒԱԾԱՇՇՈՒՆՉԸ

«Ով, որ իսկապէս ճանչցած է Սուրբ Գիրքի գիտութիւնը, գիտէ, որ Գիրքի ամենապարզ ու ամենամաստուն խօսքի զօրութիւնը կը հետապնդէ միեւնոյն նպատակը՝ մարդու փրկութիւնը, իսկ այս գիտութեան անհաղորդ մարդը յաճախ կը զայթակղի»:

(Պետրոս Դամասկացի):

Եթէ յուսահատիւնը կարդանք՝  
Հո. 8.31-38

Ի՞նչ կրնանք ըսել այս բոլորին դիմաց: Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ: Եթէ Աստուած իր Որդիին չխնայեց, այլ՝ միևնույն իսկ զայն մահուան մատնեց մեզի համար, անոր հետ նաեւ ամեն բան պիտի չչնորիե՞ մեզի: Ո՞վ կրնայ մեղադրել Աստուծոյ ընտրեալները: Ո՞չ ոք, քանի Աստուած է արդարացընողը: Կամ ո՞վ պիտի դատապարտէ: Յիսուս Քրիստո՞սը, որ մեզի համար մեռաւ՝ բայց մահուանդ յարութիւն առաւ, եւ հիմա Աստուծոյ աջ կողմն է ու կը բարեխօսէ մեզի համար: Անշուշտ ո՛չ: Ո՞վ կրնայ, ուրեմն, մեզ բաժնել Քրիստոսի սերէն: Նեղութի՞ւնը, անձկութի՞ւնը, հալածա՞նքը, սո՞վը, մերկութի՞ւնը, վտա՞նգը կամ սո՞ւրը: Ինչպէս Սաղմոսներուն մէջ գրուած է.«Զեզի համար՝ մարդիկ մեզ կը սպաննեն ամեն օր, ոչխարի պէս սպանդանոց կը տանին»:

Բայց այս բոլորէն շա՛տ աւելի յաղթական դուրս կու գանք շնորհիւ անոր, որ մեզ սիրեց: Որովհետեւ համոզուած եմ, որ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ որեւէ զօրութիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սերէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: